

# NAVASART

ORGANO DE LA U. G. ARMENIA DE CULTURA FISICA



ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ Հ. Մ. Լ. Մ.-ի

ՍԵՊՏԵՄԲԵՐ 1957

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Սկսուտական առաջին համելիսութիւնը	ԽՄԲԱԴՐԱԿԱՆ	1
Մինիքարեան սամերու ձայնը	Վ. ՊԱՀԱՏԵՐԵԱՆ	4
Մարմանակրութեան պատմականը	Շ. ԳՐԻՍԵԱՆ	6
Միջավայրին համակերպելու միջոցներ		
Տոփ. ԱկեֆՍԻՍ ԳԱՆՔ		8
Հայ երաժշտութեան յաղթամակը Միջազգային համերգի մէջ	ԶԻԹՈՒՆԻ	10
Ժամ Ակմուխեան - յօրինող եւ խմբավար	Հ. ՍՏԵՓԱՆԵԱՆ	12
Հայկական շարժապատկերը 1957ին	Կ. ԴԱՒԹԵԱՆ	14
Սկսուտութիւնը	Մ. ԵԱՆԸՆԵԱՆ	16
 30º aniversario de la U. G. Armenia	EDITORIAL	25
El prog. del deporte en Armenia	G. SHAHINIAN	27
Un beso y una sonrisa	A. NACACHIAN	30
Actividades sociales		31
Khachaturian: Gayaneh		32
El carácter del pueblo armenio	RAFFI MIRAKIAN	33
Orientaciones a los padres	RAFFI MIRAKIAN	34
Celebróse el primer aniversario de nuestro scoutismo		37
Actividades deportivas		38

## ՄՈՆԹԷՎԻՏԵՇԵՐԻ ՄԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԸԸ

Այսու կը յայտնենք Մոնթէվիտէոյի մեր յարգոյ բանադրդներուն, որ տեղւոյն մեր պաշտօնական ներկայացուցիչը Պր. Յարութիւն Մարգարեանն է, որուն կարելի է դիմել բաժանորդագրութեան եւ Վարչական գործերու համար:

**«ՆԱԻԱՍՍՐԴ»Ի ՎԱՐՉՈՒԹԻՒՆ**

### ՆՈՒԻԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆՆԵՐ “ՆԱԻԱՍՍՐԴ”Ի ՖՈՆՏԻՆ

Տիկ. Խոզա Լեւոնեանի մահուան առքիւ, փոխան ծաղկեպապի, Կարօ Գալիկիան 250, Արամ Ապրոյեան և Աքրանտ Մազլումեան 100-ական փեսո:

250 եւ Մայքը Ակմուխեան 50 փեսո:

Պր. Պալաւա Քէօլէնանի մահուան առքիւ, Պր. Կարօ Գալիկիան Հ. Մ. Ը. Բ. Ֆէրէնեան նդր. եւ Էկալֆեան նդր. 500-ական, Մարգիսեան Ա., Պէնիկան Բատ., Մարգարեան Բատ., Ճէրէնեան նդր. եւ Սուէֆիանեան եւ Արդիք 300-ական, Խորայէլեան եւ Արդիք, Փափազեան Ի., Տաղիեան, Էսդուտի Ներսէնեան եւ Թէրզեան նդր. 200-ական, Թիւիէնքնեան նդր. 100 եւ Փողհանեան Ի. 50 փեսո:

REGISTRO NACIONAL DE LA PROPIEDAD INTELECTUAL N° 496917



ԱՐԵՏՈՆԱԹԵՐԵ

Հ.Մ.Ը.Մ.-Դ

Ե. ՏԱՐԻ, ԹԻՒ 52 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1957 ԳՈՒՅՆՈՍ ԱՅՐԷՍ

### ԽՄԲԱԳԻՉԱԿԱՆ ԱՐԱՋԻՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆՆԵՐ

## ՍԿԱՌԻՏԱԿԱՆ ԱՐԱՋԻՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆՆԵՐ

Երեք տասնեակ տարի է, որ մեր Միութիւնը գոյութիւն ունի հոս, անընդհատ վերելքներ արձանագրելով:

Հակառակ ատոր, մեր կամքն անկախ պատճառներով, մինչեւ վերջերս կարելի չէր եղած կազմակերպել մեր ամենէն կարեւոր մասնաճիւղը, որ սկառաւտիզմն է եւ առանց որու գրեթէ անկարելի է լրիւ կերպով պատկերացնել մեր կազմակերպութիւնը:


Այս մասին լուրջ մտահոգութիւններ ունեցած են մեր յաջորդական բոլոր վարչութիւնները, որոնց աեւական դիմումները Արժանթինի Սկառաւտական Ընդհ. Դաշնակցութեան, Հայկական հատուած մը կազմելու համար, մնացած են անհետեւանք:

Բարեբախտաբար, տարի մը առաջ, վերոյիշեալ Դաշնակցութեան բարեհած թոյլտուութեամբ եւ հովանաւորութեամբ, կարելի եղաւ կեանքի կոչելու հայկական սկառաւտիզմը, ներքին որոշ ինքնավարութեամբ:

Պետական արտօնութեան լուրը ընդունուեցաւ մեծ խանդակութեամբ:

Հաւասարապէս ուրախ էին մեր խմբավետները, փոքրիկները եւ մանաւանդ ծնողները, որոնց միահամուռ եւ ներգաշնակ գործակցութեամբ իրականացաւ մեր տարիներու բաղձանքը:

Այս առթիւ մեր երախտագիտութիւնը կը յայտնենք Հայ հասարակութեան, որ ներկայ եւ բարոյապէս նպաստեց մեր նոր



60-97 1957 Հայ

A.R.R. @

1321

գործին. Ծնողական Խորհուրդն, որ առացքն է այս կազմակերպութեան, որուն մէջ կարեւոր բաժին մը ունին Պարսամեան Եղբայրները, այլ եւ մէր խմբագետներուն, մարզիչներուն եւ աւագեղբայրներուն, որոնք համբերութեամբ եւ գուրգուրանքով կարողացան ի մի համախմբել մէր փոքրիկները՝ անոնցմէ ստեղծելով սկառուտական օրինակելի բանակ մը:

Իրենց կազմութեան առաջին ամիսներուն մեր սկառուտները բախտաւորութիւնը ունեցան իրենց նուագախումբով գիմաւորելու մեր վեթերան բարեկամ եւ սկառուտապետ Ճորճ Մարտիկեանը, որուն համար յուզիչ անակնկալ մը եղաւ այս հանդիպումը: Երկրորդ հանդիպումը տեղի ունեցաւ Ապրիլին, «Հայ Կեդրոն»ի մէջ, ուր Մարտիկեան հրաւիրուած էր բանախոսելու եւ ապա պարզեւատրուելու Հ.Մ.Լ.Մ.ի բարձրագոյն շքանչանով:

Աեր վաստակաւոր եղբայրը, բարձր տրամադրութեամբ եւ զուարժախոսութեամբ, մեկնարաննեց սկառուտական Տասնարանեայի իւրաքանչիւր կէտը, եղբակացնելով, որ իր նկարագրի եւ ընաւորութեան կազմակերպման մէջ խոչըր դեր է կատարած սկառուտիզմը, ինչպէս եւ արթնցուցած եւ մշակած է իր մէջ հայրենասիրական եւ մարդասիրական գերազնիւ զգացումները: Վկայեց նմանապէս, որ կեանքի մէջ ձեռք բերած իր բոլոր յանդողութիւնները կը պարտի այս կազմակերպութեան յարկին տակ ստացած դաստիարակութեան եւ գործնական կրթութեան:

Այս բարեպատեհ հանդիպումներէն յետոյ, Սեպտեմբեր 8ին, Հայ Կեդրոնի մէջ, հովանաւորութեամբ Ա. Հօր եւ նախագահութեամբ Խնողական Խորհուրդի Ատենապետ Եղբ. Արտաշէս Պարսամեանի, տեղի ունեցաւ մեր նորակազմ սկառուտներու առաջին տարելիցի բացառիկ հանդիսութիւնը, ճոխ յայտագրով մը:

Նախագահի բացման խօսքէն եւ Ծնողական Խորհուրդի գեկուցումէն յետոյ, գործադրուեցաւ յայտագիրը: Տեղի ունեցան Դրօչի Պարզում, Բուրգերու կազմութիւն, Վոհմակի Մեծ կանչը եւ խաղեր, Շուշտական Մարզանք, Հայկական Պարեր, տոհմիկ տարազով, Սկառուտական Խաղեր, Սկառուտ. Շարժում եւ կենդանի Պատկերներ, որոնք զնահաւատուեցան Հիացումով եւ խելայեղ ծափահարութիւններով:

Պատուիրակ Ս. Հայրը յաղորդեց եւ քաջալերեց մարզիկները, անոնց կազմակերպութիւնը եւ գործունէութիւնը խիստ օգտակար գտնելով աղդապահպահնման տեսակետէն:

Հանդէսը փակուեցաւ Սկառուտական Քայլերգով: Հասարաւութիւնը սրահէն հեռացաւ զոհունակութեամբ:

Թէեւ սկառուտիզմը նոր երեւոյթ մըն է շրջանիս համար, բայց գաղթաշխարհի հայաշատ կեդրուններուն մէջ ան պատկառելի կազմակերպութիւն մըն է, բազմահազար երկսեռ անդամներով:

Մենք գոհ ենք եղած արդիւնքն, թէ եւ մեզ գեռ կը պակսին Այրենոյշներու եւ Կայտերու խումբերը, որոնցմով լլիւ եւ ամոռդջական պիտի ըլլայ մեր սկառաւական կազմը:

Յաջող սկիզբ ունեցանք, ու բնաւ կասկած չունինք, որ մեր ապագայ գործունէութիւնը պիտի ըլլայ աւելի արդիւնաւոր եւ խրախուսիչ: Միայն թէ մեր ծնողները պէտք է աւելի պարզ պատկերացում ունենան այս օգտակար եւ գործնական շարժման մասին, որ միջազգային բնոյթ եւ ծաւալ ունի եւ կ'ընդդրկէ քաղաքակիրթ բոլոր երկիրները:

Աւելորդ է հոս վերստին արծարծել այս շարժման էութիւնը, գաղափարները եւ գաւանանքը, կրթութեան եւ դաստիարակութեան գրաւիչ եղանակները: Մեր օրկանը, ամսէ ամիս, արդէն կը հրատարակէ սկառաւ վեթերան եւ տեսաբան Մկրտիչ Եանդեանի խիստ ուշագրաւ ուսումնասիրութիւնը սկառատիզմի մասին, որ այնքան մասնագիտական է եւ որ կը կարդացուի յափշտակութեամբ:

Այսու հանդերձ, տեղին է երկու խօսքով բնորոշել սկառատիզմը, մտքեր թարմացնելու համար:

Նախ՝ իր բուն նպատակը համամարդկային է եւ ազգային միաժամանակ, Փիղիքական եւ բարոյական կատարելութեան հասնելու ձգտումով: Սկառատիզմը համայնական զպրոց մըն է, ուր մանուկը հնարաւորութիւն ունի սորվելու եւ դաստիարակութելու ոչ թէ տեսականորէն այլ զործնականապէս, ուղղակի հաղորդակցութեան մէջ ըլլալով իրականութեան հետ:

Սկառատը պաշտօն ունի ո՛չ միայն մարդկային բարձրագոյն սկզբունքներու մասին ծանօթութիւններ քաղելու, այլ այդ սկզբունքները կիրարկելու կեանքի մէջ, գործնական եղանակով:

Սկառատական գիտելիքները կ'ընդգրկեն գրեթէ ամբողջ կեանքը, մանուկը դարձնելով համայնագէտ, ճկուն եւ ճարպիկ:

Այսպէս, սկառատը իր ընդհանուր ծանօթութիւններով տեղ մը խոհարար է, եթէ հարկ ըլլայ, ուրիշ տեղ մը ան բժիշկ է, նախնական դարմանումներու հմտութեան մէջ ան վարժուարդ է եւ երկրաչափ, գիտէ ինքզինք պաշտպանել տարերային վտանգներու դէմ:

Այլ առիթներով ան երկրագործ է կամ գիւղատնտես, կը ճանչնայ հողը եւ անոր յատկութիւնները, ընդհանուր ծանօթութիւններ ունի կենդանիներու եւ թռչններու մասին, որոնց կրնայ խնամել: Սկառատը կոյր եւ շուարուն չէ կեանքի եւ բնութեան մէջ: Արկածի կամ վտանգի պարագային ան գիտէ իր դիրքը ճշտել, սառնարին եւ առանց խուճապի մատնուելու:

Ամէն բանի մէջ հաւասարակշռուած եւ կարգապահ է, ու բովհետեւ, չնորհիւ իր կրթութեան եւ դաստիարակութեան, ներ-

## ՄԽԻԹԱՐԵԱՆ ՍԱՆԵՐՈՒ ԶԱՅՆԸ

Մուրաս Խաֆայէլեան վարժարանի նախկին սաներու, հոգեկան բերկանքով եւ երախտազիտական զգացումներով կ'ողջունենք . Մխիթարեան դարաւոր ուխտի Արքահայր՝ Գերապայծառ Ռւլուչոնեան վարդապետի ներկայութիւնը Հարաւի այս բազում կարելիութիւններով օժտուած գաղութին մէջ, մաղթելով, որ դադութիս կրթական մշակութային դործը - իր ամրողջութեանը մէջ - վերեքի նոր Հանդրուան մը արձանադրէ այս ներկայութեան բարերար ազդեցութեան իրը հետեւանք:

Բարեպատեհ այս առիթով, անհնարին է ինձ պահ մը չոգեկոչել ցեղային անփարտելի ոպէն մաքրմաւորող այն Հնկան, որ ստեղծագործական անհուն կորովով առօրուն, Հայրենի մուայլ ու տիսուր երկնակամարէն թեւածեց դէպի տար աշխարհներ, ի խնդիր լոյսի կեղրոն մը ըլլալու սահմանուած ալպահով եւ հաստատուն կայքի մը:

Սերաստիայէն մեկնելով, իր գլխաւոր Հանդրուանները եղան՝ իշխածին, Սեւանայ Վանք, Գոլիս, Յունական կղզիներ եւ վերջնականը՝ Սուրբ Ղազար, ի Վեճեսէիք:

Երբ նկատի առնենք 18րդ դարու սկիզբներուն Հայաստանի մէջ տիրող՝ քաղաքական, մշակութային վատթարագոյն պայմանները եւ ընդհանուուր թանձր խաւարը, մասսմբ պիտի կարենանք գաղափար մը կազմել ՄԵ՛ծ Առաքեալին՝ Սերաստացի Մխիթարի ցեղին յարատեւման, բարձրացման եւ լուսաւորման ի սպաս դրած նույիրումին մեծութեան, հաւատքին անսասանութեան եւ Մխիթարին աշխատանքին հոյակապութեան մասին:

Այս տեսանկիւնէն դիտուած, Մխիթար վերջին քառորդ հազարամետկին մեծապոյն վերանորոգի Յեղափոխականը, անսխալ Տեսանողը եւ կորովի իրագործողը հանդիսացաւ: Յեղային առողջ ընազդով օժտուած, զգաց որ տիրող ընդարձացուեց ցեղը կ'առաջնորդէ դէպի սույոյ մահ: Անհրաժեշտ էր հայ ժողովուրդը լուսաւորութեան ճամբով ինքնամանաշման առաջնորդել, որուն արամարանական հետեւանքը պիտի ըլլար ժողովուրդին մէջ ստեղծել ծառում մը՝ հին օրերու նման աղասա ապելու, աղատութեան մէջ ստեղծադործելու եւ արժանավայել, բարօր կեանք մը ունենալու:

Եւ Մխիթար յաջողեցաւ իր առաջադրութիւններուն մէջ, մեղի ժառանգ ձգելով դարերով ապրելու եւ լոյս ու չերմութիւն սփուելու սահմանուած հասաւատութիւն մը, որ իր արժանաւոր յաջորդներուն ջանքերով տակաւ կը մեծնայ, կ'ուրմանայ:

Մխիթար առանձինն հայ կեանքի վերանորոգման աշխատանքի հիմնադիր:

Պաշնակուած են իր Փիղիքական, մտաւոր եւ բարոյական կարողութիւնները:

Ի մի բան, սկառուտիզմը Փիղիքական, բարոյական եւ մտաւոր ապահովգրութիւն մըն է կեանքի մէջ:

Եւ ո՞վ չի ուզեր, որ իր զաւակը մանկուց ապահովադրուի այս մեծ ընկերակացութեան, ապագային ունենալու Համար բարեկիրթ եւ ազնիւ մարդ: Ծնողներուն կը մնայ այս ամսին մտածել եւ անվարան իրենց զաւակները յանձնել մեր սկառուտական կազմակերպութեան խնամքին:

ԵՇ եղաւ իր ժամանակին :

Այսօր եւս, հայ ժողովուրդն ու իր դարաւոր հայրենիքի մեծագոյն ժամը խորշակաւ ընող աննախնթաց եղեռնէն մօտ յիսուն տարի յետոյ, եւ Սփիւրքի խեկաները Փիզիքական ապահովութիւն գտնելէն, տուն տեղ ըլ-լալէն, նի թապէս գրեթէ նախանձելիք վիճակ մը ստեղծելէն ու ազգային կենաքը մահամբ կազմակերպելէն յետոյ, հրամայականորէն պէտք ունին պահ մը կանգ առնելու եւ վերաքննութեան ևնթարկելու ցարդ կիրարկուած մեթուները կրթական, մշակութային զործերուն մէջ վերագննելու անհատական խմբակցական մտայնութիւնները, զիրար զիտեկու, տեսնելու կերպերը. հասնող սերունդները ազգային ոդիով զամատիքարակելու, զանոնք հայ կեանքին մէջ պատասխանատու գործերու համար պատրաստելու եղանակը. ու նաեւ, ինչո՞ւ չէ, տակաւ մտածելու հասնող զարգացած - հայկական եւ մասնպէտական հիմնական պատրաստութեամբ - եղիտասարդները մէր բնակած երկիրներու պետական, ընկերային, մշակութային, հրապարականդարձական, գիտական եւ այլ ասպարէզներէն ներ թափանցելու աշխատանքը կազմակերպել, որպէսսպի անոնք ուղղակի եւ անուղղակի միջոցներով ոչ միայն աշխատին մէր հաւաքական կեանքի բարեկաման, այլ մանաւանդ, ազգային նուիրական մէր դատին նպաստաւոր մինուրու, բարեհացակամ տրամադրութիւն ստեղծելու զործին սատարեն, մէր ապրած երկիրներու պետական մշակութային հրապարագրական շրջանակներու մէջ :

Եւ դեռ պէտք է մէր ներքին փոխյարարենրութիւննէն վանել տուուք, կեղծերը, ֆծինքն ու անվստահութիւնը, որոնք կը խաթարեն նկարագրիր մատղաշ հոդիներու եւ ամլութեան կը դատապարտին մէր հաւաքական ճիգերն ու աշխատանքները :

Հայր Հայուն - առանց այլ որակականներու - աչքերուն պէտք է նայի շեշտա'կի, վստահութեամբ, սրտբաց անկեղծութեամբ եւ զիրար հասկնալու իրական ճիգով :

Ու տակաւն մէ՛ն իրականացնամներու, հերոսական զործերու բաղձանքը պէտք է արթնցնել մատաղ հոգիներու մէջ, միտքն ու հոգին պրկող, գըմուա՛ր, ճիգ' պահանջող աշխատանքներու ընծայած վայելքին, հաճոյին ճաշակը տալով նորերուն. դիւրին գործե՛րը, թող ման թոյլերո՛ւ բաժին :

Ահա այս վերանորոգչական հոկայ եւ անյետաճելիք աշխատանքը պէտք է սկսիլ մէր ուսուումնարաններէն ընդհանրապէս, եւ երկրորդական վարժարաններէն մասնաւորապէս, որոնց վերապահուած նախախնամական գերը տակաւին շատերուն համար նոր ըմբռնելիք կը գառնայ:

Երկրորդական վարժարանները պէտք է զառնան այն նուիրական հոցները, ուր պիտի թրծուին վաղուան լուսամիտ մէծ առաջնորդները, որոնք զրահուած ցեղային անխորատակելիք կամքով, իմաստութեամբ, լրջութեամբ եւ մէր բնակած երկիրներու ընձեռուած գիտական մշակութային պաշարով, Սփիւրքի հայկական նկարագրիր, դիմադրական կարողութիւնը անեղծ պիտի պահեն, հայութիւնը պատրաստելով այն մէծ օրուան՝ երբ երէկուան հալածական, անիրաւուած, անարգուած եւ իր հայրենիքէն ջարողուելով արտաքուած բեկորները, Սփիւրքի մէջ վէրքերը սպիտակնելէ, կազմակերպուելէ, հօռանալէ ու սեփական ճակատագրին տէրը զառնալէ յետոյ պիտի կազմակերպեն Յաղթական Մէծ վերագրածի վսեմ զործը:

Ու կը հաւատա՛նք. մէր նախինքներու կրանիթեայ հաւատքով, որ Սփիւրքի եւ պատմական բնագաւառի մէջ փոքրիկ մասին վրայ հերոսական ճիգերով ուռնացող ժողովուրդին միահամուռ ջանքերով այդ Յաղթական Մէծ Վերագրածի օրը պիտի դայ անպայման:

ՎԱՀԵ ՊԱՀԱՏՐԵԱՆ

## ՄԱՐՄԱԿՐԹՈՒԹԵԱՆ ՊԱՏՄԱԿԱՆԸ ՀՈՒՄԱՅԵՑԻՔ

Հոռոմ քաղաքին հիմնարկութեան նախնական շրջաններուն, հոռոմայեցի զօրավարներ զինուորական արշաններ եւ ճակատամարտեր սկսելէ առաջ, կրօնական հանդէսներ կը սարքէին զինքերու պաշտպան աստուածներու ի պատիւ, եւ անոնց օրնուութիւնը ու պաշտպանութիւնը կը հայցէին:

Ճաւատապով թէ իրենց խնդրանքը նկատի առնուած է ու ճակատամարտը պիտի շահէին, այնքան մեծ եռանդով չէին կռուեր ու երբեմն ալ կը կրոսնցը նէին. ու այն առեն միայն կը հետեւցնէին թէ իրենց խնդրանքը նկատի չէր առնուած ու իրենք հակառակը կարծելով սիամլունք մը գործած էին:

Ծերունի զօրավար մը, ուրիշներէ աւելի դիտող ու մանաւանդ գործնական, խորհեցաւ որ փոխանակ աստուածներու պաշտպանութիւնը ու օրհնութիւնը առաջուց խնդրելու, աւելի լաւ էր յետոյ չնորհակալութիւն յայտնել, ու այսպէսով աստուածները ստիպել աւելի ուշադրութեամբ հետեւելու կոփէին զանազան ժամերուն: Ու իրաւ ալ այդ ծերունի ու իրազէս ինելացի զօրավարին հակատամարտները յաջողութեամբ աւարտեցան, ու իր խոստման համեմատ հանդէսներ սարքեց, ուր Փիլիքական ուժի փորձերը ու առաջին հանդիսացողները պատուուեցան: Աւրիշ զօրավարներ իր օրինակին հետեւեցան, ու ատենէ մը ետքը հոռմայեցիք այնքան հանդէսներ տօնեցին որքան որ կոփւներ շահած էին:

Բայց հանրութիւնը որ անդամ մը հանդէսներու հաճոյէին համը առած էր, չուզեց կոփւներու սկսելուն կամ վերջանալուն սպասել հանդէսներ տօնելու համար, որով ինքինն ստեղծուեցաւ հոռմէական հանդէսներուն որոշ զրութիւն մը՝ ճիշդ այնպէս ինչպէս յունական ոլիմբիական խաղերը սկսան՝ իրը արդիւնք պէտք երու ու զպացումները, ու այս ամէնուն կը յաջորդէին մարմնամարզական փորձերը:

Հոռմէական հանդէսները կը բացուէին կրօնական արարողութիւններով ուր աստուածներու պատիւներ կ'ըլլային, յետոյ կուզային ոտքով վազելու ու կառք քշելու մրցումները, ու այս ամէնուն կը յաջորդէին մարմնամարզական փորձերը:

Սկիզբները հոռմէացիք իրենց բարքերուն եւ պէտքերուն համեմատ մարզանքի ու մրցումի յատուկ ձեւեր ունէին, բայց հանրապետական շրջանին վերջերը երբ սկսան յունական քաղաքակրթութեան ու բարքերուն հետ շվման մէջ մտնել ու անոնցմէ որոշ շափով մը ազդուիլ, յունական մարզանքի խաղերէն մէծապէս օգտուեցան:

Յունական ճարտարապետութեան ճաշակաւ ու յունական մարզանքներու ձեւով շինուած առաջին մարզարանը կանգնեց նէրօն կայսրը, ու այս շիները ինքնին հրաշալիք մըն էր:

Հանրային մարզարանները ամէն հանգստաւէտութիւն կը պարունակէին. այսպէս իւրաքանչիւր մարզարանի մէջ կային բաղնիքներ, վազելու, ցատկելու, ըմբշամարտելու, գնդակ խաղալու մասնաւոր վայրեր, ու ամէն քաղաքացի ու քաղաքացուէի իրենք իրենց պարտաւորութիւն կը համարէին օրուան մէջ որոշ ժամեր հոն անցնել, զօրանալու եւ մաքրուելու համար: Մէկ խոսքով երբ տակաւին հոռմայեցիներուն բարքերը չէին ապականած, հանրային մարզարանները եւ բաղնիքները հոռմայեցիք մը համար յաճախելի ամենէն սիրելի վայրերն էին:

Ժողովուրդ մը՝ որ անհատապէս ինքովինքին գիտակցութիւնը ունի, բնական է թէ հանրային գործերով ու կառավարական գործելակերպով պիտի ուղէ հետաքրքրուիլ, ու ճիշդ ալ այդպէս եղաւ: Հոռմէացիք իրենց վրայ իշ-

խողներուն ապօքէնութիւնը, անբարոյականութիւնը տեսած ու բողոքել սկըսած էին՝ այն ատեն կայսրերը, իր ժողովուրդին մտադրած գաղափարը ցորւելու յարմարագոյն միջոց հանդէսներու թիւը աւելցուցին, ու իրաւ ալ, երբ սովորական ժամանակներ տարին 8-10 հանդէսներ աեղի կունենային, Քրիստոսէ առաջ 354 թուեկանին այդ հանդէսներուն թիւը 175ի հասաւ ։ Այս կայսրերը իրենց նպատակին հասաւ, որովհետեւ ժողովուրդը սկսած էր մեղկ ու վաւաշու հանդէսներէ ախորժիլ ու աստիճանաբար անբարոյանալ:

Հոռոմայեցիք այնպէս կը հաւատոյին թէն նոր փորուած գերեզմաններու վրայ մարդկային արիւն պէտք էր սրակել: Ու միեւնոյն առեն կունելու փառագը այնքան արածուած էր իրենց բարքերուն մէջ, որ վերջէն զերի գերի դէմ հանելու եւ զիրար սպաննել տալու որոշումը տուին, իր ուժի գերազանցութիւնը որոշող յարմարագոյն միջոց:

Մահուա դասապարտեանները, ծախու առնուած ու պատերազմներու մէջ բանուած գերիններ իրար համար հետ կունեցնելը հոռմէսական հանդէսներուն ամենէն աւելի փնտուուած մասը կազմեց ու միայն այդ նպատակով աւատին հարպարակներ ու ամփիթատրոններ շինուեցան որոնք գիւրութեամբ կրնային հարպարաւոր անձեր պարփակել:

Այսպէս Մաքսիմիայի հրապարակը 600 հարտա լայնութիւն ունէր եւ դիւրութեամբ 360.000 հոգի կրնար պարունակել:

Հրապարական ու ասանեակ հազարներու ներկայութեան նապատառակ եւ աղուէս որսալու հանդէսներ կը կազմակերպուէին, բայց ժողովուրդը՝ որ մեզամ մը աւելի բուռն պայքարներու ականատես եղած էր՝ բնականարար մեծ հաճոյք մը չզգաց այս բաղդատաբար անմեղ ժամանցներէն, որովհետեւ իրեն աւելի հաճոյք կը պատճառէր մեռնլու վրայ եղող հոգեվարք վիրաւորեալի մը գալարումները:

Այսպէս հետզետէ խաղերն ու պայքարը մարդոց եւ վայրի գաղտններու միջեւ կատարուելով ալ աւելի դաժան ձեւ մը առին Յուլիոս Կեսար արուեատական լիներու վրայ կուռելու նոր ձեւ մը ստեղծեց, բայց ժողովուրդը՝ որ միշտ նորութիւններ տեսնելու վարժեցուցուած էր, ալ աւելի խորժուէ հանդէսներ պահանջեց ու իրաւ ալ իշխանութիւնները ժողովուրդէն կամքը յարգած ըլլալու համար մարդաշարը կազմակերպեցին:

Լիմի մը վրայ 100 խոշոր նուերու մէջ 19.000 զերիններ լեցուցին, որոնք պարտաւոր էին կոռուկ և պատութիւն խոստացուած էր ամէն անոնց, որոնք կարենային կարելի եղածին չափ շատ ժարդ մէուցնելով հանդիսականներուն լաւ ժամանց մը հայթայիշել:

Բայց ժողովուրդը որ միշտ կը ձանձրանար, այս մարգարտէն ալ սկսաւ շախորժիլ, եւ Բրօսիւս, նորութիւն մը դամած ըլլալու համար, Վրապարակին վրայ արուեստական անսաւ մը կանգնել տուաւ, ուր ասանեակ հազարներու եղիքրուններ, վայրի արջեր եւ ուրիշ տեսակ կ'ենցանիններ կային. Ժողովուրդը սպաս էր ուզած կենդանինները որսալ եւ առնել տանիլու

Ինչպէս տեսանց ամէն նոր զրօնանք իր այժմէութիւնը կորանցուց, բայց կապք վաղցնելը միշտ սիրելի մնաց, մանաւանդ այն ատեն ն երբ քրիստոնեայ կամրերը գերիններու միջեւ կոփները արգիւցին:

Կառք վաղցնելու փորձը ընդհանրապէս երկու, երեք եւ չորս միերէ կը բաղկանար, որոնք թեթեւ կառքի մը կը լծուէին:

Ահաւասիկ շատ համաօստ նկարագրութիւնը հոռվմէսական խաղերուն մնթերցողը անշուշտ պիտի զիտիք այն անօրինակ սէրը զոր Հոռմէսացիք առնէին արիւնալից տեսարաններու մասին, բայց միեւնոյն առեն ալ պէտք է գիտնալ թէ ճիշտ այդ վայքարաց հակումները ու արիւնալից հանդէսները եղան գլուխութ պատճառներէն մէկը Հոռմէսական կայսրութեան քայքայման:

ԸԱԽԱՐԾ ՔՐԻՍՏՈՆԵԱՆ

## ՄԻԶԱՎԱՅՐԻՆ ՀԱՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԻԶՈՑՆԵՐ

Կը համակերպենք ընկերային միջավայրին՝ ինչպէս որ ֆիզիքականին։ Ստային եւ ֆիզիքական գործունէութիւնները կը ճշտին անհասար-կել ամենանպաստաւոր բարեփոխութեան՝ յարմարուելու համար իր միջա-վայրին։ Ընդհանրապէս, անհատի մը համար գիւրին չէ իր պատկանած խըմ-բակէն բարձրանալ եւ իր ցանկացած դիրքին հասնիլ, որովհետեւ ամէն մէկը կ'ուզէ տիրել, հրամայել, գիտնալ եւ վայելել. եւ այսպէս, տեւականօրին, մղում եւ բաղձանք կը զգայ՝ հասնելու համար հարստութեան եւ փառքի, որաքան ալ անտարբեր ըլլայ իր շրջանակը եւ միսնդամային աննպաստ իր պայմանները՝ իր փափաքները իրազորդելու համար։

Գիտակցութիւնը կը հանդուրժէ ընկերային միջավայրը՝ միայն համա-կերպելով անոր. համակերպութեան ձևու կախում ունի անհատին կազմը-ւածքն։ Կը համակերպինք միջավայրին կամ՞ զայն նուանելով եւ կամ անկէ փախուստ տալով, երբեն ալ անկարելի կ'ըլլայ յարմարուիլ։

Մարդկային դիրքը հանդէպ իր նմաններուն եւ աշխարհին, անընդհատ պայքար մըն է։ Մատայնութիւնը կը փոխարինէ միջավայրին թշնամական ճր-դով մը, ուղղուած նոյն միջավայրին։ Եւ այսպէս կը զարգանայ նաեւ խորա-գիտութիւնը եւ իմացականութիւնը, ինչպէս եւ կամաւոր ուշադրութիւնը, դիտնալու փափաքը եւ գործելու կամքը։

Տիրելու բաղձանքը, որ զանազան կերպարանք կը ստանայ մարդու եւ միջավայրի համեմատ, ամենամեծ դիպուածներու ներշնչողն է։ Այդ բաղ-ձանքն էք, որ Պատուիորին առանորդեց դէպի բժշկական բարեշղութիւնը, նապոլէոնին՝ մէծ տիրապետութեան մը կառուցումը, Այնշտայնին՝ տիբկե-րական ստեղծագործութիւնը։ Տիրելու նոյն բաղձանքն է, որ ներկայ աւա-զակները կը մղէ գողութեան, ոճրագործութեան, ընկերային, տնախսական եւ եկեմտական շահատակութեանց, ինչպէս եւ կը հիմնէ հրանդանցներ, տարրալուծարաններ, համալսարաններ եւ եկեղեցներ։ Այլ խօսքով՝ մարդը կը մղէ կամ՞ դէպի յաջողութիւնը եւ կամ դէպի մահը, երբեմն դէպի դիւ-ցանութիւնը կամ ոճրագործութիւնը, բայց երբեք դէպի երջանկութիւնը։

Միջավայրին համակերպելու երկրորդ ձևու փախուստն է. կան շատեր, որ կը լքն պայքարը եւ զիջնելով իրենց դիրքը, որ այլեւս անպէտք է, կը վերածուին պաշտօնեայի կամ գործառորի, ու կ'ըլլան նաեւ ընչազուրկ ։ Կան ուրիշներ որ կ'ամփոփուին իրենք իրենց մէջ, կամ միաժամանակ, գոնէ մասամբ մը, յարմարիլ միջավայրին եւ նոյնիսկ յաղթահարել խոշնդունե-րը չնորհի իրենց բարձր իմացականութեան, առանց երբեք պայքարելու։ Ու-րիշներ կը մտնան նոյնիսկ միջավայրը, անընդհատ գործի պատճառով, եւ անոնք որոնք հարկադրուած են տեւական գործունէութեան, կը յարմարին որեւէ դիպուածի։ Օրինակ, մայրը կը կորմնցնէ իր զաւակը եւ ունի ինսամքի կարօտ ուրիշ զաւակներ, բայց իր ցաւը իսկ յիշելու ժամանակ չունենար։

Գործը ալելուն եւ մորֆինին աւելի աղջու միջոց մըն է, համակերպելու համար միջավայրի ներհակ կացութեանց։

Երբեմն անհատներ իրենց կիսնքը ապարդին կ'անցնեն խանդավառուած հպարտութեան, առողջութեան եւ երջանկութեան երազներով։ Յոյսը եւ եւ բազները զօրաւոր միջոցներ են՝ համակերպելու համար միջավայրին։ Յոյսը սնունդ կուտայ գործին, եւ ճիշտ ասոր համար է, որ Քրիստոնէութիւնը զայն կ'ընդունի իրեն մէծ առաջինութիւն մը։ Յոյսը անհատի մը ամենահզօր մէկն է, հանդուրժելու համար աննպաստ միջավայրի մը։ Եւ, վեր-

ջապէս, կարելի է համակերպել միջավայրին իրը հետեւանք սովորութեան:

Յաւը շատ աւելի շուտ կը մոցուի քան երջանկութիւնը, իսկ անդոր-ծութիւնը կը կրնապատկէ կեանքի բոլոր տանչանքները Մեծ համաճարակ մը, որ վտանգաւոր յեղաշրջումը բերած է իրեն հետ՝ ծուլութիւնն է:

Կան բազմաթիւ անձինք, որոնք երբեք չեն համակերպեր իրենց ընկերութեան, որոնց կարգին կը գտնուին հոգիով տկարները, որ իրենց համար տեղ մը չեն կրնար գտնել այս արդիական ընկերութեան մէջ, նոյնիսկ մասնաւորապէս իրենց համար կաստոցուած հաստատութեանց մէջ:

Բաղմաթիւ տողը երախաներ կը ծնին վատասերած կամ ոճրագործ հայրենին, որոնք արդի միջավայրին մէջ կը զարդացնեն իրենց մարմինը եւ միտքը եւ սակայն անմիջապէս չեն կրնար որդեգրել բնականոն կեանքը. եւ այդպիսով կը կաղմեն բանտի բնակչութիւնը եւ կամ կ'ապրին գողութեամբ եւ մարդասպանկթեամբ: Այս մարդիկը արդինարերական քաղաքակրթութեամբ աղյուսաբեր եւ անպատճիսանառու զոհերն են, ինչպէս են նա՛եւ արդի գլուխութեալ մէջ կրթուած մանուկները, որոնց վաստիսրակները կ'անտեսնեն մտային կերպոնացման եւ բարոյական կարգապահութեան ճարտար ջանքերու անհրաժեշտութիւնը: Եւ երբ այսպիսիները, յետոյ, աշխարհի անտարբերութեան, բարոյական եւ նիւթական ընդդիմութեան հանդիպելով, կը ջախջախուին, այլևս անկարող կ'ըլլան համակերպելու պատահածին ու կ'ընթարեն փախուատի ճամբան, եւ կամ կը դիմեն օգնութեան՝ ինդրելով իրենց պատապարումը:

Անոնք են որ անյաջողութեան պարագային, ընկնելով գերագոյն ապահովի մը մէջ, կը նախընարեն ոճրագործութիւնը կամ ինքնասպանութիւնը:

Ուժեղ եւ կորովի երիտասարդներ, որոնք գործի են ջղային առկունութենէ, կը վարանին կեանքի պարագը մղելու, ինչպէս կը պահանջի նոր դարաշրջանը, անոնց յաճախ կը տեսնենք ճննաժամային դրաւթեան մէջ, որ օդնութիւն եւ սնունդ կը թափանձնեն իրենց ծերուկ ծնողներէն: Մերապարամիջոցներով ձեռք բերաւած արդիւները կամ ճայրայել շքաւորութիւնը անկարել կը գարձնեն նոր աշխարհի մէջ որպէս անձ մը գրաւելու:

Երբեմն կեանքի որոշ ձեւերը անհատին կ'առաջնօրդէն աւղակի դէսի անկումը: Աշխարհի մէջ գոյութիւն ունին չա՛տ աղյուսաբեր պարմաններ, ինչպէս տաք եւ խոնա կրիման սպիտակամորթերու համար:

Կրնանք, գործի եւ պայքարի միջոցով, յարմարի աղքատութեան, անհանգստութեան, բարոյական տանջանքներու, ինչպէս եւ յեղափոխութիւններու ու պատերազմներու աւելումներուն առանց այլասերուելու, բայց չենք կրնար վարժուիլ ծայրայել չքաւորութեան կամ բարգաւաճումին. ծայրայել չքաւորութիւնը մեզ կը տանի, անողոքելի կերպով, ուսի ցեղային տը կարուցումը: Նոյնը կը պատահի հարստութեանը, երբ իրենց ակրերը գործի են պատասխանատուութիւնէ: Բայց եղած են ընտանիքներ, որոնք երկար տարիներ տիրացեր են գրամի եւ աղդեցութեան, որոնց չնորհիւ մնացեր են միշտ ուժեղ եւ ինքնավատահ: Մակայն այն ատենները գրամը կը հայթայթուէր հողերու տիրացումով, որու համար անհրաժեշտ էին պայքարը, անխոնչ աշխատանքը եւ յարատել ջանքը:

Այս օրերուն հարստութիւնը իրեն հետ ոչ մէկ պարտականութիւն կը բերէ եթէ ոչ մարդկային տկարացումը: Նոյնքան վտանգաւոր է անգերծութիւնը առանց հարստութեան:

Ո՞չ շարժապատկերը, Համերգները, ձայնասփիւուը, ինքնաշարժը, ո՞չ իսկ մարզանքը կրնան փսխարինեկ մտային աշխատանքին կամ արդիւնաւոր

## ՀԱՅ ԵՐԱՋԵՏՈՒԹԵԱՆ ՑԱՂԹԱՆԱԿԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԵՐԳԻՆ ՄԷՀ

Գրեց՝ ԶԻԹՈՒՆԻ

Երէկ, Աւրբաթ, 5 Յուլիս, Փարիզի ամենէն մեծ որաշին (5000 հոդի պարփակող երաժշտասիրահին) «Փալէ ուղ Շայեօքի բեմին վրայ» մէջ, հայր ապրեցաւ իր ամենէն պատմական օրերէն մէկը, «Սիլիան - Կոմիտաս» երգ-չափումը ինախաճեռութեամբ։

Երեւակայեցէք, թէ Հինգ հազարնոց ամենազդի բազմութեան մը տասնեակ հազար աշքերուն առջեւ ի՞նչ ակնապարար պատմէր կը պարզուէր, երբ լայն վարագոյը կը բացուէր՝ հոգեկան մեծ վայելք մը ըմբովիննել տալու համար մեզի։

Որպէսզի ներկայ չեղողներու վայելքը եւս լիակատար ըլլայ՝ պէտք է շեշտենք հետեւեալը։

Երեկոյթի առաջին ու երկրորդ նիւթերը երգուեցան երկու աւտորիական տարրեր խումբներէ։ Առաջնը՝ երեսնեակ մը երդիչներով, երկրորդը՝ երկդիցեակ մը։ Երկուքն ալ երկսեռ, երկուցն ալ ոտից ցուուի սեփս-սեռ տարազով, զոյտ մը մասնազէս երաժիշտ-պրոֆէսօններու ղեկավարութեան տակ։ Երկու խումբներուն կոյմէ ի՞նչ մեծ ջանք ու դրամ ծախուած էր՝ հասկնալի է։ Գետութիւն է Աւատրիա։ Միջազգային երաժշտութեան աւանդական երկիրը։

Երրորդ կարգը՝ հայերս էինք։ Երբ վարագոյը ծանրօրէն վեր բարձրացաւ, խօսհակին պարագայական բացատրութիւններէն ետք, ծափերու տեղատարափը պոթեաց։ Մեր աշքերը պարարող անճառելի տեսարն մը՝ բնմին վրայ զամեց տասը հազար աշքեր։ Կարծէք ձինածագիկներու կամ ձերմակ շուշաններու պարտէք մը բուռած էր՝ ճերմակ շապիկով հայուհիններէ, լայն բեմին մէկ ծայրէն միւսը, որոնց կորչ տերեւները կը կազմէին իրենց ետեւ կանգնած այր երդիչներու շաբերը։ Ի՞նչ օրտապարար տեսարան, - հայկական երկսեռ խումբն էր բեմին վրայ, երիտասարդ տաղանդաւոր կարպին Ակրիկեանի ղեկավարութեամբ։

Երկարատեղ թնդացին ծափեր ութ կտոր հայաշունչ եւ կրօնաբուխ բազմամյա երգերու ընթացքին։ Ասկերուակ խորքին վրայ՝ երգեհօնին այն ու ձախը՝ առկաի ամենազդի ազգային շրջաններու կարգին կը փայլէր նաև հայկական։ Եթէ ան լրիւ չէր երեւար, անորս ակիշին մէջ խորոված ազդը սակայն, աւա կը շողար ։ Անքիայ հայերս, արդար փառքով չէ՞ր որ գումացում կը գտնէինք, մեր անգայինն անկորչնելի մշակոյթին շնորհւեւ։ Մարմով մեզ անձիւել ուղղող մահիկը արդեօք ներկայ աչք մը ունէ՞ր այդ միջազգային մեծ փառատօնին։ Մարմինը կորչնական է, բայց հոգին՝ անմահ։ Երէկ ալ, այսօր ալ, վա՛զն ալ։

Ես չեմ մտներ մանրամասնութիւնների մէջ։ Կրնայ ըսուել՝ թէ հայ երգ-

գործունէութեան։

Դեռ շա՞տ հեռու ենք լուծելու, համար արդի ընկերութեան ամենավասնականը ինները, որ է զրաղութիւն պահանը։ Այս հացը կարելի է լուծել միայն բարյական եւ ընկերային յեղափոխութեան դինով։ Սակայն, առ այժմ, այնքան ակար ենք պայքարելու ծուլութեան դէմ, ինչպէս անկարող ենք կուռելու խմբից եւ մտային հիւանդութեանց դէմ։

Տաքք. Անդքիս ԳԱՆԵԼ Խապան քարգամանց Ա. Թ. Ա.

շախումբը... կատարեալ չէր: Կամ կրնար... աւելին ընել: Թերեւս ըսողներ ըլլան, որ միւս ազգերու խումբերն ու մեղեդիները... աւելի լաւ էին: Վեց ճեկի էիտերը, հռո, իմ աշքին կը ջրանան: Զժայլիլ կապոյտ ծովերու եւ ովկիանուներու կամ բարձրասաց արերու վրայ ծափող բարի արեւը որքո՞ն տղեղ բաներու ալ վրայ կը թափէ իր շողերը: Մենք մեր գուշաբնե՞րը աեւո նենք ու գնահատենք՝ օտարներու ենու: Այդքան հազարաւոր դու ծափերէն մեծագոյն մասը՝ օտար այլազան քաղաքակրթ-քրիստոնեայ ձեռքերէն էր որ կը թուչէրն, կը թնդացնէին թատրոնին կամարներն ու կողմնամասերը, ներկայ բիւրաւոր երկսեռ երածշտասէրներուն սիրաերն ու հոգիները: Ու դիտէ՞ք, թէ այդ մէ՞կ իրիկուան մար մանող արեւին հետ՝ քանի՞-քանի հազար օտար միտքեր, որոնք ցարդ հայուն ինչ ըլլալին անգամ չէին դիտեր, անկանած, կարեւոր շափով մը ճանչցան հայ աղդն ու իր դարաւոր մշակոյթը, կրօնական լարերու վրայ, քանի որ համաշխարհային այդ երգատոնը կազմակերպուած էր մի միայն կրօնական սրբազան երգեցողութեան գրօշին առկ:

Թող մեզմէ աւելի՛ խայտան, ի տես այս որբազան հայ երգի յաջողութեան, բոլոր անոնք՝ որ ոչինչով ճամբար ելան, անհաւատալի կարճ ժամանակի մը մէջ մարզեցին, կարդի բերին, բեմի վրայ հանեցին հայ երկներ երգչախումբը եւ ճշմարիտ պարծանքի իրաւունքով պանծացուցին ավելը: Ասոնց ի գլուխ՝ մոռնալու չէ անունը գերյարգելի Հայր Ամառառնիին, որ ամֆն ճրդ թափած ու յաջողած էր իր ձեռնարկին մէջ, իրեն գործօն աջակից ունենալով Տոքթ. Արամ ծինճեան, Գր. Գրիգոր Ազամեան եւ խումբ մը անձնուէր հայրենակիցներ: Եւ ամէնուն ձեռակից՝ մեր պատառական հայ ժողովուրդը, որ այս կարգի ամէն գործի համար չէ՛ խնայած իր համեստ լումաններ: «Կաթիլ-կաթիլ՝ լիճ կ'ըլլայ, կը հոսի կ'երթայ՝ ծով կ'ըլլայ»:

Առանց այդ ժողովրդական կայլակներուն՝ ոչ նախաձեռնութիւնը կը պահկուէր, ոչ առանց գրամի՝ եւ բարական կոկիկ գումարի՝ միւմբը կը տնտեսուէր, բեմի վրայ կրնար հանդէ գալ:

Մեր անվերապահ ծափերը՝ ուրեմն՝ այդ գեղեցիկ միջազգային փառատօնը ՀԱՅՑԱԿԱՆՆ ԱԼ ԸՆԵԼ կրցողներուն:

Այս ազգը երբեք չի՛ մեռնիր:

Հայը մի՛շա ներկայ է. միշտ անմահ ու խօսուն:

## ԲԱՑԱՐԻԿ

### ՆԵՐԿԱՅԱՑՄՈՒՄ-ՊՐԱԱՇՆԹԵԾ

ՆԱԻԱՍԱՐԴԻ 5-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԻ ԱՌԹԻՒ

ՀՈԿՏԵՄԲԵՐ 19 ԾԱԲԱԾ ԺԱՄԸ 21ԻՆ

Մեծ պատրաստութեամբ պիտի ներկայացուի  
Ե. Թողոյեանի, Ա. Քէշեանի եւ Ք. Սիմոնի կողմէ գրուած

## ԿՐԵԲԼ ՍԿԵՈՒՏ

Պոլսահայ կեանքէ տանուած խիստ քրքշալիք  
կատակերգութիւնը, զեկավարութեամբ Կարօ Գալիկեանի  
եւ մասմակցութեամբ Տիկ. Ազնիր Խըտրեանի եւ  
Գաղութիս սիրուած ուժերուն:

## ԺԱՆ ԱԼՄՈՒԽԵԱՆ - ՅՈՐԻՆՈՂ ԵՒ ԽՄԲԱՎԱՐ

Իր ստեղծագործութեանց առաջին նուագահանդէսը տեղի ունեցաւ 14 Սեպտեմբերին, Թուական մը, որ յիշտակելի պիտի մնայ անոնց համար, որոնք ներկայ էին այս համելէսին:

Զափալանցութիւն չէ եթէ ըստն, որ բացակաները զրկուեցան հոգիկան մեծ հաճոյքէ մը: Որովհետեւ հանդէսը բացառիկ էր յայտագրով, բացառիկ էր երեւոյթով, բացառիկ էր իր կազմակերպութեամբ եւ յաջողութեամբ, մանաւանդ կարգապահութեամբ:

Մենք այս տպաւորութիւնն ունինք, որ ներկաներու մեծամասնութիւնը եկած էր պարզ հետաքրքրութեան համար, ոմանք ալ հայկական միջավայրի մը մէջ գտնուելու սովորութեամբ եւ կամ բարեկամական կատերով, բայց մեր երիտասարդ արուեստագէտ մեզի զգացնել տուաւ, որ մեր ներկայութիւնը ոչ թէ պատահական պէտք էր ըլլար, այլ պարտաւորիչ:

Թող թոյլ տրուի մեզ ժատնանշել երեւոյթ մը, որ հաւանաբար անշմար անցաւ:

Երեւոյթը այս էր, թէ ինչպէս արուեստագէտին խումբ մը ընկերները կրենց անշահախնդիր աջակցութիւնը բերած էին հանդէսին յաջողութեան: Արախուսիչ երեւոյթ մը, որ հազորադէպ է մեր հասարակական կեանքի մէջ: Անոնք արժանի են մեր անվերտապահ դնաւատանքին, այս օրինակելի կեցւածքին համարց:

Թայտպգիրը կազմուած էր հետեւեալ ձեռավ.

### Ա.

Հայկական շարք (դաշնամուրի համար)

1.- Ներածութիւն, 2.- Պար թիւ 1, 3.- Գիշերային, 4.- Պար թիւ 2, 5.- Երգապար (Ծոնուած):

Լուրջ ստեղծագործութիւն մը ոչ միայն խորքով, այլ նաև արհեստագիտութեամբ (թեքիքապէս) խրին: Ալմուխեան կրցած է յախնապէս հաշտեցնել եւրոպական իմաստով երածշտութիւնը հայկական նուրբ եւ զգայուն մեղեդիները, որոնք շնչառուած են պարերու, մանաւանդ շրջապարին մէջ: Սաեղծագործութեան այս շարքը ունեցաւ իր արժանի թարգմանը, քանձինս Անթառած Ահարոնեանի: Աւրիշ առիթներով երկար դրած ենք մեր այս շնորհալի արուեստագիտով հիմասին: Այլեւս ան դարձած է քաղաքիս նախանձաթ գաշնակահարուելին. իրեն վերապահուած է արժանաւորապէս մեզ ծանօթացնելու հայկական նոր արժէքներու ստեղծագործութիւնները: Հոս տեղին է յիշել որ Անկուն 12ինք տեղական ազգային ռատոիկայանէն, նուազեց հայ ճեղինակներու գործերը և ուր նկատելի էր թեքնիքի յառաջդիմութիւն եւ երդժշտական լորունումի աւելի հասունութիւն:

### Բ.

1.- Կամձրելէ Դասոք՝ Է. Բարիէթթա), 2.- Գիշերային (Խոսք՝ Լ. Բարիէթթա), 3.- Խաւակի Մաւտէք (Խոսք՝ Թումանեանի), 4.- Ծաղկաւտ Դաշտը (Խոսք՝ Դ. Վարուժանի):

Մեներգներ, Ամէլիս Պազան, դաշնակի ընկերակցութեամբ:

Հաս մեզի, ցայտադրին ասմենախօնզ մասն էս ուր Ալմուխեան կը յայտնաբերէ յօրինողին բացառիկ կարողութիւնը կրցած է թափանցել բանաստեղծին միտքը, մասնակից ըլլալով անոր ապրումներուն եւ յուզումներուն, ստեղծելով իւրաքանչիւր բանաստեղծութեան յատուկ ոճը: Գարուստ ներդաշնադրութով ուր պահելով հաւասարակշռութիւնը երդին եւ դաշնամուրին միշեւ:

Այս աշխատանքը առաւելապէս զգալի է, երբ երդչուհին օտարաբառ երգերէն վերջ, անցաւ հայկականին:

Հոս նկատեմ է, որ Ալմուխեան կրցած է եւրոպականին տալ եւրոպական ոճ, չեղաւ եւ գունաւորումներ, ինչպէս ըրած է հայկական երգերուն, որոնց զանազանութիւնը չեշտակօրէն զգալի է նոյնիսկ օտարներուն:

Ամալիա Պազան արժանացաւ մեծ զնահատանքի: Ան երդչուհի մըն է բացառիկ ձիրքերով եւ օժտուած բոլոր կարելութիւններով: Ունի յատակ առողջանութիւն, զգայնութիւն եւ ձայնական ելեէջներու արուեստագիտական արտայայտութեան ձևերը եւ գաղտնիքները:

## Գ.

## ՃԱՄԵՐԾՈՅՆԵՐ

1.- Գարնանային Զեփիւաներ (Խոսք՝ Պարգևե Հրայրի, (Մեներգուղներ՝ Շ. Թովմասեան եւ Վ. Պէրպէրեան), 2.- Քամերի (Խոսք՝ Դ. Վարսիման) և (Մեներգուղներ՝ Շ. Թովմասեան եւ ի. Մորալէս, Վ. Պէրպէրեան, Պարիկ Շիրաքեան եւ Ա. Քաստրօ), 3.- Հայրենիքիս (Խոսք՝ Ա. Մուրատեան), (Մեներգուղներ՝ Ե. Ճընազեան եւ Ա. Քաստրօ):

Երդչախումբը բաղկացած էր յիսուն երկսեռ անձերէ, որոնցից 38 օտարներ Այս: Այս պարագան երիտասարդ արտեստագիտը կ'արդարացնէ Հայկական բացառիկ ձայներու չգայութեամբ: Սակայն օտար ուժերու օժանդակ կութիւնը ունեցաւ իր անպատճեութիւնը, մեր լեզուի պատճառով: Օտար երդիչները ստիպուած էին իրենց ուշադրութիւնը կեզրոնացնել ոչ այնքան զեկավարի նշաններուն սրբան մեր բառերու առողջանութեան եւ հնչումներուն:

Այսու հանդերձ համերգները սինէ կորսնցացին իրենց հմայէն, հառարակութիւնը պահելով նոյն խանգամառաթեան մէջ:

Ալմուխեան որքան որ կը հետեւի արդիական երգչուտական կասընթացը ներբռու, ինչ որ բնական է, բայց ան զանական եւ վիպական խառնուածքով արօւեստագիտ մըն է:

Իր ստեղծագործութիւններէն կ'եղրակացնենք, որ մեր հեղինակի խմբավարը ինքնառափ է, գերծ միանգամայն օտար ճաշակի քմահանցյաներէ եւ արդիական ձգտումներու կաշկանդումներէ որոնց եթէ փորձութիւնն ունենայ մնթարիւելու, կը գառնայ պարզ արհեստակից մը, կաղապարտած օտար մտայնութեամբ եւ օտար ճաշակով, կորսնցնելով իր ինքնութիւնը:

Այս պատճառով իր համերգները գրաւիչ են, համենալի եւ ազգային հոգեբանութեամբ, ինչ որ սկզբունքն է մեր մեծ Կոմիտասի, որ կ'ըսէ Հայ Բնարքի յառաջարանին մէջ:

«Հոգ տարինք, որ պահենք ինքնուրոյն բնաւորութիւն անեցող եւ զուտ ազգային գրոշմ կրոզ հայ ունը եւ ոգին»:

Վերջացնելով մեր խոսքը ուրախութեամբ կ'արձանագրենք, որ մեր երիւտասարդ հեղինակը ուղղի եւ հասատ ճամրու վրայ է իրեն ինքնառափ հայ արուեստագիտ մը, որ դիտակ է իր կոչումին, գժուարութեանց, բայց նև կորովի է ձգտելու կամարելութեան:

Օգտուելով այս բարեկամաեն ասիթէն, աւելորդ չենք համարեր թեւաղբանք մը քնել, որ, կ'ենթադրենք, բոլորի փափառն է:

Մենք ունինք ծանօթ եւ շնորհալի արուեստագիտուհի մը յանձինս Օր, Ալիսիս Թէրպէեանի: Որքան համելի պիտի ըլլար, եթէ միասնաբար կազմակերպէին նուազահանդէս մը, բացառութար իրենց ստեղծագրեւութիւններով և քաղաքի լաւագոյն ուժերու աջակցութեամբ:

## ՀԱՅԿԱԿԱՆ ՇԱՐԺԱՊԱՏԿԵՐԸ 1957ԻՆ

Հայկական շարժապատկերի արուեստի համար 1956 թիւը բեղմնաւոր տարի եղաւ։ Արտադրութեցին հինգ գեղարվուեստական կինոնկարներ – «Ամպրովի արաւետովչ», «Պատուի համար», «Ալիքն է երգում», «Յովազաձորի գերիները», «Ենք քեզ հետ են ընկերներդ» եւ «Շարիկը ու տարիներ» գեղարվուեստական գաւերադրային նկարը, որը պատկերում է Ս. Հայաստանի ջընազ բնութիւնը, նրա գեղեցկաշխ քաղաքներն ու աւանները, նրա արդիւնաբերութիւնը, գելզատնաւութիւնը, մշակոյթն ու արուեստը եւ նրա մարդկանց կեանքն ու աշխատանքային առօրեան։ Դրանցից զատ, կինոսառուդիան տուեց նաև մեր մեծ բանաստեղծ Ալ. Խուճակեանի ու թառունամեայ յոթելեանին նրա պիրուած մի գեղեցիկ կինոակնարկ եւ մի կինոակնարկ եւա, որը պատկերում է 1956 թուի Յունիսին կայացած Հայկական արուեստի ու գրականութեան առանօրեակը Մոսկովյայում։

1957 թուի սկիզբից կինոսառուդիան արդէն մեռնամուխ է եղել ընթացիկ տարրուան համար նախատեսուած կինոնկարների արտադրութեանը։ Արդէն սկսուել են ևլամօս Փիլմի նկարահանումները։ Այդ նկարը պատկերում է ցարական գաման բռնկարութեան դէմ յեղափոխական պայքարի տարիներին Կամոյի (Սիմոն Տէր Պետրոսեանի), այդ անվեցեր ու աննկուն յեղափոխականի առասպեկտական սիրագործութիւնները։ Բազմատասնեակ գրքեր են գըրուած Կամոյի ժաման։ բազմաթիւ պիէսներ են գրուած, որոնք բեմադրուում են շատ թատրոններում։ Անհնարին է մի կինոնկարում ընդգրկել Կամոյի ողջ հերոսական կեանքը, եւ բնական է որ նկարահանուող Փիլմը կ'արտացոյի նրա կեանքի համար բնորոշ զրուազներ միայն։

